DOI: 10.54503/1829-4324.2023.1-136

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐԻ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 2020-2022 ԹԹ. ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Գոհար Վազգենի Վարդանյան

Հոդվածը ստացվել է՝ 10.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 03.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Հոդվածի արդիականությունը: Ցանկացած հասարակությունում պետության գլխավոր առաքելությունը իր երկրի բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների կիրառումն է և նրանց համար բարեկեցության բավարար մակարդակի ապահովումը:

Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, բնակչության աղքատության խնդիրը եղել է և ներկայումս էլ համարվում է սոցիալապես վտանգավոր երևույթ ողջ հասարակության համար, ուղեկցվելով սոցիալական և տնտեսական անկայունությամբ, գործազրկությամբ և հասարակական զարգացումը խոչընդոտող մնացած սոցիալական խնդիրներով:

Աղքատության մակարդակի վիճակագրական ուսումնասիրության ժամանակ առաջին հերթին որոշվում է եկամտի այն սահմանը, որը ապահովում է սպառումը՝ նվազագույն թույլատրելի մակարդակում, այսինքն՝ որոշվում է կենսանվազագույնի արժեքային մեծությունը, որի հետ և համեմատվում են բնակչության առանձին շերտերի փաստացի եկամուտները: **Կենսանվազագույնը** իրենից ներկայացնում է սպառողական զամբյուղի արժեքային գնահատականը, ինչպես նաև պարտադիր վճարներն ու հավաքները:

Կենսական նվազագույնի որոշման համար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է՝ուսումնասիրել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների դինամիկան եռամսյակային կտրվածքով 2020-2022 թթ. ընկած ժամանակահատվածում՝ սեզոնայնության բացահայտման համար:

Խնդիրները: Հոդվածում դրված նպատակին հասնելու համար մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքի դինամիկան եռամսյակային կտրվածքով 2020-2022 թթ. ընկած ժամանակահատվածում;
- Բացահայտել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների սեզոնայնության բնույթը նշված ժամանակաընթացքում, եռամսյակային կտրվածքով, միաժամանակ վեր հանելով ներկայումս նկատված օրինաչափությունները՝ սեզոնային ալիքի համատեքստում;
- վեր հանել սպառողական գների ինդեքսի ազդեցությունը պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքի վրա՝ ըստ նրա առանձին բաղադրիչների (պարենային և ոչ պարենային ապրանքների, ծառայությունների):

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Աշխարհի բոլոր երկրներում (սկսած դեռևս կապիտալիզմի ձևավորման սաղմնային փուլից, հատկապես Մեծ Բրիտանիայում), շուկայական տնտեսության անցման փուլից սկսած նաև հետ-խորհրդային երկրներում, բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության համատեքստում մշակվել է սպառողական զամբյուղների հաշվարկման մեթոդա-բանություն՝ հիմնվելով, այսպես կոչված, օբյեկտիվ բնութագրիչների վրա, որոնց համաձայն սահմանվում են սպառման որոշակի ստանդարտներ կամ կենսա-կերպի չափանիշներ, որի հիան վրա հաշվարկվում է հասարակության տվյալ անհատի բազային պահանջմունքների բավարարման թույլատրող եկամտի մեծությունը՝ կենսանվազագույնը կամ աղքատության գիծը, որից ցածր տվյալ անձը իր եկամուտներով չի կարող ապահովել իր կենսագործունեության պահ-պանման նույնիսկ ամենահրատապ կարիքները:

Գրականության վերլուծություն: Բնակչության կենսամակարդակին նվիրված բոլոր տնտեսագիտական աշխատություններում[1], սոցիալ-տնտեսական վիճա-կագրության բոլոր դասագրքերում[2], աշխարհի տարբեր երկրների վիճակագրա-կան ծառայություններում (նաև ՀՀ Վիճակագրական Կոմիտեում) Համաշխար-հային Բանկի կողմից ներդրված է կենսանվազագույնի հաշվարկման միևնույն մեթոդաբանությունը, ինչը մենք հանգամանորեն կներկայացնենք ստորև բերված «Մեթոդաբանություն» բաժնում:

Հիմնախնդրի վերլուծությանն անդրադառնալով, բավականին խորը վերլու-ծելով կենսանվազագույնի կամ աղքատության գծի հիմնահարցերը Ն.Ե.Տիխոնո-վան իր «Քաղաքային աղքատության ֆենոմենը ժամանակակից Ռուսաստանում» մենագրության մեջ նշում է. «Տվյալ խնդրի (աղքատության-խմբ.) հետագա խո-րացված ուսումնասիրության կանխորոշող անհրաժեշտությունն այն է, որ մինչ այժմ աղքատության վերլուծությունը գրեթե միշտ ընթացել է/ անցել է մակրո-մոտեցումների պրիզմայով, կարծես թե «թռչնի թռիչքի բարձրությունից»: Գնա-հատվել է կենսապահովման նվազագույնի կառուցվածքը, աղքատների թվաքա-նակը Ռուսաստանում, նրանց բաշխումն ըստ տնային տնտեսությունների տի-պերի և բնակչության տարբեր խմբերի (տարիքային, կրթական և այլն): Միևնույն ժամանակ, որպես կանոն, տեսադաշտից դուրս էին մնում այն խնդիրները, թե իրականում ինչպե՞ս է ընթանում աղքատ ընտանիքների կյանքը, ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով են նրանք գոյատևում, ինչի՞ց են զրկված, և այդ զրկանքներից ո՞րն է նրանց համար ամենադժվարը, ինչպե՞ս են իրենք տեսնում իրենց օգնելու

[1] Н.Е. Тихонова, «Феномен городской бедности в современной России», М.:, Летний сад, 2003, 408 стр., И.В. Шугаева, ««Новые бедные» в социальной структуре современного российского общества (на материслах города Хабаровска)»,диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Хабаровск, 2016, 152 стр., Ю.В.Бондаренко, «Социальные сети малоимущих граждан Ставропольского края», диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Ставрополь, 2018, 197 стр.; Գ.Վ.Վարդանյան, Գ.Լ.Մամիկոնյան «Սպառողական զամբյուղների հաշվարկման մեթոդաբանությունը «ՀՀ տվյալներով»», «Հայաստան.Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N 1 (78), էջ 231-235:

[2] «Экономическая статистика», учебник, под редакцией Ю.Н.Иванова, Москва, ИНФРА-М, 2008, сс. 627-630.

անհրաժեշտությունը և այլն: Կարծում եմ, որ արդեն ժամանակն է նայելու աղքատությանը «ներսից», հենց աղքատների աչքերով[1]»: Ըստ հեղինակի, աղքատությունը Ռուսաստանում, ի դեմս մի շարք քաղաքագետների հիմնավորման, միշտ եղել է: Ավելին, չկա այնպիսի երկիր, որտեղ ընդհանրապես չլինեն աղքատներ, և տեսանելի ապագայում այդպիսի հասարակություն չի էլ ենթադրվում: Սակայն, նրա կարծիքով, ներկայումս Ռուսաստանում (ինչու չէ նաև հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ և Հայաստանում-խմբ.) 90-ական թթ. բարեփոխումներից հետո աղքատության երևույթը կրեց զանգվածային և քրոնիկ բնույթ, և այն դրսևորվեց, այսպես ասած, որպես «հասարակությունից դուրս մղված» շերտ, ձեռք բերելով որակապես այլ կենսակերպ, լինի դա հասուն անձ, թե երեխա, որոնք իրենց համարում են «երես դարձվածներ կամ մերժվածներ»[2]:

Ի.Շուգաևան նույնպես խորապես վերլուծել է ռուսաստանյան հասարակության մեջ դրսևորվող աղքատության, բնակչության մեջ ձևավորվող «նոր աղքատներ» հասարակության շերտի, կենսանվազագույնի, սպառողական զամբյուղների հաշվարկման հարցերը: Նա իր ««Նոր աղքատները» ժամանակակից ռուսաստանյան հասարակության սոցիալական կառուցվածքում» ատենախոսության մեջ հանգամանորեն անդրադառնալով կենսանվազագույնի հարցերին նշում է. «Կենսանվազագույնի կիրառման ոլորտը բավականին ընդարձակ է. այն և' նվազագույն սոցիալական երաշխիքների ոլորտի բաղկացուցիչ է, և' հիմքն է աղքատության գծի սահմանման համար, միաժամանակ նաև հիմք է հանդիսանում աշխատավարձի, բոլոր տեսակի նպաստների և թոշակների հաշվարկման և տարբերակման համար: Վերջինս հաշվարկվում է սպառողական նվազագույն և ռացիոնալ բյուջեների տվյալների հիման վրա: Սպառողական զամբյուղի արժեքային գնահատականը կազմում է կենսանվազագույնի հիմքը»[3]:

Յու. Բոնդարենկոն իր «Ստավրոպոլի երկրամասի քիչ ունևոր/ կարիքավոր քաղաքացիների սոցիալական ցանցերը» ատենախոսության մեջ գրում է. «Ռուսաստանյան հասարակության սոցիալական շերտավորման կառուցվածքում ժամանակակից սոցիալական շերտավորումը և պահպանվող անհավասարությունը առաջադրում են բնակչության կարիքավոր/քիչ ունևոր շերտերի դրության սոցիոլոգիական գիտակցման նկատմամբ պահանջների բարձրացում, այն է՝ եկամտի մակարդակից կախված նրանց տարբերակում (աղքատներ, չունևորներ, կարիքավորներ և այլն) և, առաջին հերթին, նրանց կարիքավորության պատճառների վերլուծության և բացատրության վերաբերյալ ասպեկտներում, կյանքի համար ձևավորված անբարենպաստ իրավիճակներից դուրս գալու միտումների՝ ինչպես սոցիալական ինստիտուտների, այնպես էլ ոչ ֆորմալ կապերի օգնու-

[1] Н.Е. Тихонова, «Феномен городской бедности в современной России», М.:, Летний сад, 2003, стр. 6.

[2] Տես նույն տեղում, էջ 6

[3] И.В. Шугаева, ««Новые бедные» в социальной структуре современного российского общества (на материслах города Хабаровска)»,диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Хабаровск, 2016, стр. 76-77 .

թյամբ, ամենից առաջ սոցիալական ցանցերի:»[1]

Մեթոդաբանություն: ՀՀ ՎԿ-ի կողմից հրատարակած վիճակագրական տարեգրքերի «Բնակչության կենսամակարդակ» բաժնում ներկայացվում են տվյալներ տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի, սպառման և աղքատության ցուցանիշների վերաբերյալ: Տնային տնտեսությունների վիճակագրությունը սոցիալ-տնտեսական վիճակագրության ոլորտներից է, որն ուսումնասիրում է բնակչության կենսամակարդակը: Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տվյալների հավաքագրման առավել կարևոր գործունեության տեսակներից է: Նման հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների կենսամակարդակի վերաբերյալ հավաքագրվում է բավականին հարուստ տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ՎԿ-ին տարեկան կտրվածքով հանրությանը արդիական տեղեկատվություն տրամադրել երկրում աղքատության մակարդակի փոփոխության վերաբերյալ: Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն (ՏՏԿԱՀ) առաջին անգամ Հայաստանում անց է կացվել 1996թ.-ին, այնուհետև 1998/99թ., և սկսած 2001թ.-ից այն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Հետազոտություններն իրականացվել են տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոփոխմամբ (ռոտացիայով): Հետազոտության արդյունքները հիմնականում կիրառվում են երկրում սպառման վրա հիմնված աղքատության մակարդակի գնահատման համար: Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը մշակված է Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից: Առաջին անգամ այն ներդրվելէ 1996թ.-ին, այնուհետև վերանայվել է և կատարելագործվել 2004, 2009 և 2019թթ.-ին: Նման ճշգրտումները բնական են և համապատասխանում են միջազգային լավագույն փորձին: ՀՀ-ում դինամիկ փոփոխվող հանրության շրջանում դրանք պետք է հաճախակի իրականացվեն (օրինակ՝ յուրաքանչյուր հինգ կամ վեց տարին մեկ անգամ): 2020-2021թթ. համար գնահատված աղքատության մակարդակները 2009 թվականի սպառողական զամբյուղի և մեթոդաբանության վրա հիմնված աղքատության գնահատման ցուցանիշներից տարբերվում են երեք առումով. ա) սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվել է ՏՏԿԱՀ-ի վերանայված հարցաշարի տվյալների հիման վրա,

բ) ՏՏԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքագրման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետ) միջոցով,

գ) փոփոխվել է աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը:

Սրանք կարևոր բարելավումներ են, որոնք համահունչ են կենսամակարդակի գնահատման միջազգային լավագույն փորձին, սակայն, թույլ չեն տալիս ապահովել նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ համադրելիությունը: Այդուհանդերձ, նոր մեթոդաբանությունն ավելի ճշգրիտ է արտացոլում տնային տնտեսությունների սպառման ծավալն ու կառուցվածքը: ՀՀ-ում աղքա-

[1] Ю.В.Бондаренко, «Социальные сети малоимущих граждан Ставропольского края», диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Ставрополь, 2018, стр. 4.

տության գնահատականի հիմքում ընկած է «հիմնական կարիքների արժեքի» (ՀԿԱ) մեթոդը: ՀԿԱ-ի էությունը սպառման ՏՏԿԱՀ-ով փաստագրված այն զամբյուղի դրամական արժեքի գնահատումն է, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Այս դրամական արժեքը կոչվում է «աղքատության գիծ»:

Նոր մեթոդաբանությամբ փաստագրված աղքատության գիծը դրամական արտահայտությամբ ներկայացնում է (պարենային և ոչ պարենային) ապրանքների և ծառայությունների արժեքը, որն արտացոլում է տվյալ երկրում կենսամակարդակի նվազագույն մակարդակը:

Հայտնի է, որ կենսական նվազագույնի որոշման համար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը: Նվազագույն սպառողական զամբյուղը ներառում է երկու բաղադրիչ՝ նվազագույն պարենային զամբյուղը և հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառումը:[1] Նվազագույն սպառողական զամբյուղը (պարենային հավաքածուն) բնութագրում է սննդամթերքների բնական հավաքածուն՝ հաշվի առած սննդակարգային սահմանափակումները և ապահովում է կալորիաների նվազագույն անհրաժեշտ քանակությունը:[2]

Վերլուծություն: Հայտնի է, որ սոցիալ-տնտեսական երևույթների եռամսյակային (ամսական) տվյալների ուսումնասիրության ժամանակ հաճախ վեր են հանվում որոշակի, մշտապես կրկնվող տատանումներ, որոնք էապես չեն փոխվում երկարատև ժամանակաընթացքում: Դրանք հետևանք են բնակլիմայական պայմանների, ընդհանուր տնտեսական գործոնների, ինչպես նաև բազմաթիվ տարբեր գործոնների ազդեցության, որոնք մասամբ են համարվում կարգավորվող: Վիճակագրության մեջ այն պարբերական տատանումները, որոնք տարվա կտրվածքով ունեն որոշակի և կայուն ժամանակաընթացք, կոչվում են «սեզոնային տատանումներ» կամ «սեզոնային ալիքներ», իսկ ժամանակային շարքը այդ դեպքում անվանում են սեզոնային տրենդ, կամ սեզոնային ժամանակային շարք:

Սեզոնային տատանումները բնութագրվում են հատուկ ցուցանիշներով, որոնք կոչվում են սեզոնայնության ինդեքսներ (I_s): Այդ ցուցանիշների համակցությունը արտացոլում է սեզոնային ալիքը: Սեզոնայնության ինդեքսները իրենցից ներկայացնում են փաստացի ներտարեկան մակարդակների տոկոսային հարաբերությունը կայուն կամ փոփոխական միջինին: Սեզոնային տատանումների բացահայտման համար սովորաբար վերցնում են մի շարք տարիների տվյալներ, որոնք բաժանված են ըստ եռամսյակների (ամիսների): Ոչ պակաս, քան երեք տարվա վերաբերյալ տվյալները կիրառվում են կայուն սեզոնային ալիքի բացահայտման համար, որպեսզի նրա վրա չարտացոլվեն մեկ տարվա պատահական պայմանները:[3]

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2022, էջ 136-139, https://www.armstat.am/file/doc/99534408.pdf

[2] Գ.Լ.Մամիկոնյան, «Բնակչության պարենային ապահովության տնտեսա-վիճակագրական գնահատման մեթոդաբանությունը և վերլուծությունը (ՀՀ տվյալներով)», ատենախոսություն տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2014, էջ 69:

[3] Գ.Վ.Վարդանյան, «Էկոնոմետրիկայի հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ., էջ 74

Հիմնվելով ՀՀ Վիճակագրական Կոմիտեի պաշտոնական տեղեկատվության վրա, ներքոհիշյալ աղյուսակ 1-ում ներկայացնենք պարենային և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի դինամիկան 2020-2022թթ. եռամսյակային կտրվածքով,միջին ընթացիկ գներով (հաշվարկված Արմստատի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի)[1]:

Աղյուսակ 1

ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնային ալիքը ըստ եռամսյակների բնութագրող շարքի սեզոնայնության ինդեքսների հաշվարկը 2020-2022թթ.

Եռամսյակներն ըստ տարեթվերի	Պարենային զամբյուղի արժեքը, ամսական կտրվածքով, ՀՀ դրամ	Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, ամսական կտրվածքով, ՀՀ դրամ	Պարենային զամբյուղի սեզոնայնության ինդեքսը յուրաքանչյուր եռամսյակի համար, %	Նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնայնության ինդեքսը յուրաքանչյուր եռամսյակի համար, %	Պարենային զամբյուղի սեզոնայնության ինդեքսը նույնանուն եռամսյակների, %	Նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնայնության ինդեքսը ըստ նույնանուն եռամսյակների, %
2020թ.						
1-ին	34,68	61,39	90,51	87,85	97,35	97,44
2-րդ	36,87	65,26	96,23	93,39	103,67	103,75
3-րդ	34,47	60,15	89,97	86,08	99,13	98,82
4-րդ	34,07	60,31	88,92	86,31	99,85	99,99
Ընդամենը	140,09	247,11				
2021թ.						
1-ին	35,98	66,57	93,91	95,27	97,35	97,44
2-րդ	37,86	70,05	98,81	100,25	103,67	103,75
3-րդ	38,14	70,55	99,54	100,96	99,13	98,82
4-րդ	38,69	71,57	100,98	102,42	99,85	99,99
Ընդամենը	150,67	278,74				
2022թ.						
1-ին	41,24	76,30	107,63	109,18	97,35	97,44
2-րդ	44,43	82,20	115,96	117,63	103,67	103,75
3-րդ	41,33	76,46	107,87	109,42	99,13	98,82
4-րդ	42,02	77,74	109,67	111,24	99,85	99,99
Ընդամենը	169,02	312,7				
Ամբողջը	459,78	838,55	1200	1200	1200	1200

* Աղյուսակը կազմված և հաշվարկված է հեղինակի կողմից ՀՀ ՎԿ-ի պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա

[1] https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2020-2022թթ. հունվար-դեկտեմբերին, հավելված 2, տես «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» բաժինը

Հաշվարկենք ըստ տարիների ժամանակային շարքի միջին մակարդակները և ընդհանուր միջինը երեք տարիների համար միասին վերցրած:
Պարենային զամբյուղի համար՝ **$\bar{Y}_{2020}$ = 35,0225ՀՀ դրամ; $\bar{Y}_{2021}$ = 37,6675ՀՀ դրամ; $\bar{Y}_{2022}$= 42,255ՀՀ դրամ; $\bar{Y}$= 38,315 ՀՀ դրամ:**

Նվազագույն սպառողական զամբյուղի համար՝**$\bar{Y}_{2020}$ = 61,7775ՀՀ դրամ; $\bar{Y}_{2021}$ = 69,685ՀՀ դրամ; $\bar{Y}_{2022}$= 78,175ՀՀ դրամ; $\bar{Y}$= 69,879ՀՀ դրամ:**

Հաշվարկն ավարտվում է ստացված սեզոնայնության ինդեքսների ճշտության ստուգմամբ: Քանի որ բոլոր եռամսյակների (ամիսների) համար սեզոնայնության միջին ինդեքսը պետք է հավասար լինի 100%, ապա ըստ եռամսյակային (ամսական) տվյալների ստացված ինդեքսների գումարը հավասար պետք է լինի 1200-ի:

Ինչպես վկայում են վերոհիշյալ աղյուսակ 1-ում բերված տվյալները, ՀՀ-ում վերջին երեք տարիներին թե՛ պարենային զամբյուղի և թե՛ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքները ըստ եռամսյակների ակնհայտորեն բնութագրվել են աճման միտումներով: Միջինում պարենային զամբյուղի արժեքը 2020թ.-ին կազմել է 35,0225 ՀՀ դրամ; 2021թ.-ին՝ 37,6675 ՀՀ դրամ, իսկ 2022թ.-ին՝ 42,255 ՀՀ դրամ; այսինքն՝ 2022թ.-ին 2020թ.-ի համեմատությամբ այն աճել է 1,2065 անգամ (կամ՝ կազմել է 120,65%; աճել է՝ 20,65%-ով); իսկ 2022թ.-ին 2021թ.-ի համեմատությամբ այն աճել է 1,1218 անգամ (կամ՝կազմել է 112,18%; աճել է՝ 12,18%ով):

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը միջինում կազմել է համապատասխանաբար. 61,7775 ; 69,685 և 78,175 ՀՀ դրամ: Այսինքն՝ այն 2022թ.-ին 2020թ.-ի համեմատությամբ աճել է՝1,2654 անգամ, կամ՝կազմել է 126,54%; կամ էլ՝աճել է 26,54%-ով; իսկ 2022թ.-ին 2021թ.-ի համեմատությամբ աճել է՝ 1,1218 անգամ, կամ՝ կազմել է 112,18% ; կամ էլ՝ աճել է 12,18%-ով:

Գիտական նորույթը: Հոդվածի գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- կիրառելով սոցիալ-տնտեսական երևույթների սեզոնայնության ուսումնասիրության վիճակագրական մեթոդը, հաշվարկելով վերջին երեք տարիներին ՀՀ պարենային զամբյուղի, և նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնայնության ինդեքսները եռամսյակային կտրվածքով **բացահայտվել է**, որ 2022թ.-ի բոլոր եռամսյակներին գրանցվել է բարձր ցուցիչներ, ինչը սկսել է նկատվել դեռևս 2021թ.-ի 4–րդ եռամսյակից, արդյունքում խախտվել է նախկին տարիներին հանրապետությունում մշտապես նկատված օրինաչափությունը (3-րդ և 4–րդ եռամսյակներին միշտ գրանցվում էր սեզոնայնության ինդեքսների առավել ցածր ցուցանիշ՝ համեմատած տարվա մնացած եռամսյակների հետ՝ կապված մրգերի, բանջարեղենի բերքահավաքի ժամանակահատվածում դրանց գների համեմատաբար ավելի ցածր լինելու հետ),
- **բացահայտվել է** պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքների վրա սպառողական գների ունեցած ազդեցությունը սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կտրվածքով:

Եզրակացություն: Վերլուծության արդյունքները փաստում են, որ և' պարենային զամբյուղի, և' նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնայնության ինդեքսների առավել բարձր ցուցիչներ են գրանցվել 2022թ.-ի բոլոր եռամսյակներին,

չնայած այդ միտումը դեռևս նկատելի է եղել սկսած 2021թ.-ի 4–րդ եռամսյակից: Դա նշանակում է, որ հանրապետությունում օրինաչափորեն, մշտապես նկատված դրսևորումները (3-րդ և 4–րդ եռամսյակներին միշտ գրանցվում էր սեզոնայնության ինդեքսների առավել ցածր ցուցանիշ՝ համեմատած տարվա մնացած եռամսյակների հետ՝ կապված մրգերի, բանջարեղենի բերքահավաքի ժամանակահատվածում դրանց գների համեմատաբար ավելի ցածր լինելու հետ) իրենց արտացոլումը չեն գտել 2022թ.-ի եռամսյակային ցուցանիշներում:

Իհարկե, 2022թ.-ի 3-րդ եռամսյակում, համեմատած տարվա մնացած եռամսյակների հետ նկատվում է դարձյալ փոքր ինչ ավելի ցածր ցուցիչ, սակայն, վերոնշյալ օրինաչափությունը խախտված է:

Հարկ է նշել, որ այս միտման վրա իր բացասական ազդեցությունն է ներգործել հանրապետությունում սպառողական գների աննախընթաց աճը: Այսպես, համաձայն ՀՀ ՎԿ-ի պաշտոնական տվյալների, սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ, ընդամենը) 2022թ.-ին նախորդ՝ 2021թ.-ի նկատմամբ կազմել է 108,3%; այդ թվում՝սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքների գծով - 110,0%; ոչ պարենային ապրանքների գծով - 107,1% և ծառայությունների գծով -107,2% [1]:

Օգտագործված գրականության ցանկ:

1. Н.Е. Тихонова, «Феномен городской бедности в современной России», М.:, Летний сад, 2003, 408 стр.,
2. И.В. Шугаева, ««Новые бедные» в социальной структуре современного российского общества (на материслах города Хабаровска)», диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Хабаровск, 2016, 152 стр.,
3. Ю.В.Бондаренко, «Социальные сети малоимущих граждан Ставропольского края», диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Ставрополь, 2018, 197 стр.
4. Գ.Վ.Վարդանյան, Գ.Լ.Մամիկոնյան «Սպառողական զամբյուղների հաշվարկման մեթոդաբանությունը «ՀՀ տվյալներով»», «Հայաստան.Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես,N 1 (78), էջ 231-235
5. «Экономическая статистика», учебник, под редакцией Ю.Н.Иванова, Москва, ИНФРА-М, 2008, 736 стр.
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2022, էջ 136-139, ՀՀ ՎԿ, armstat.am https://www.armstat.am/file/doc/99534408.pdf
7. Գ.Լ.Մամիկոնյան, «Բնակչության պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանությունը և վերլուծությունը (ՀՀ տվյալներով)», ատենախոսություն տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2014, 207 էջ:
8. Գ.Վ.Վարդանյան, «Էկոնոմետրիկայի հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003թ., 164 էջ]

[1] «Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը»,2022թթ. հունվար-դեկտեմբերին, էջ71 https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf

https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/Ekonometrika.pdf
9. https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2020-2022թթ. հունվար-դեկտեմբերին, հավելված 2, տես «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» բաժինը
10. «Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2022թթ. հունվար- դեկտեմբերին, էջ 71
https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf

References

1. Tihonova, N.E. Fenomen gorodskoj bednosti v sovremennoj Rossii. - M.: Letnij sad, 2003, 408 s.
2. I.W.Shugaeva, ««Novie benie v socialnoj strukture sovremennogo rossijskogo obshchestva (na materialakhgoroda Khabarovska)», dissertaciya na soiskanie uchenoj stepeni kandidata sociologicheskikh nauk, Khabarovsk, , 2016, 152 pages.
3. Bondarenko Ju.V.Social'nye seti maloimushhih grazhdan Stavropol'skogo kraja. Dissertacija na soiskanie uchenoj stepeni kandidata sociologicheskih nauk, Stavropol', 2018, 197 stranic.
4. G.V.Vardanyan, G.L.Mamikonyan, «Sparoxakan zambyuxneri hashvarkman metodabanutyuny «HH tvyalnerov»», «Hayastan.Finansner yev ekonomika» handes, N 1 (78), pp. 231-235.
5. «Ekonomicheskaya statistika», uchebnik, pod redakciyej Yu.N.Ivanova, Moskva, INFRA-M, 2008, 736 pages.
6. Hayastani vichakagrakan taregurq-2022, pp. 136-139, HH VK, armstat.am https://www.armstat.am/file/doc/99534408.pdf
7. G.L.Mamikonyan, «Bnakchutyan parenayin apahovutyan tntersa-vichakagrakan gnahatman metodabanutyuny yev verlutsutyuny (HH tvyalnerov)»,atenaxosutyun tntesagitutyan teknatsui gitakan astichani haycman hamar, Yerevan, 2014, 207 pages
8. G.V.Vardanyan, «Ekonometrikayi himunqnery», usumnakan dzernark, Yerevan, 2003, 164 pages
https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/Ekonometrika.pdf
9. https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf, «Hayastani Hanrapetutyan social-tntersakan vichaky», 2020-2022tt. Hunvar-dektemberin, havelvats 2, tes «Hetaqrqrasharj Vichakagrutyun» bajiny
10. «Hayastani Hanrapetutyan social-tntersakan vichaky», 2022t. Hunvar-dektemberin, page 71
https://www.armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐԻ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 2020-2022 ԹԹ. ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Գոհար Վազգենի Վարդանյան

Համառոտագիր: Աղքատության մակարդակի վիճակագրական ուսումնասիրության ժամանակ առաջին հերթին որոշվում է եկամտի այն սահմանը, որը ապահովում է սպառումը՝ նվազագույն թույլատրելի մակարդակում, այսինքն՝ որոշվում է կենսանվազագույնի արժեքային մեծությունը, որի հետ և համեմատվում են բնակչության առանձին շերտերի փաստացի եկամուտները: **Կենսանվազագույնը** իրենից ներկայացնում է սպառողական զամբյուղի արժեքային գնահատականը, ինչպես նաև պարտադիր վճարներն ու հավաքները:

Կենսական նվազագույնի որոշման համար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է՝ուսումնասիրել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների դինամիկան եռամսյակային կտրվածքով 2020-2022 թթ. ընկած ժամանակահատվածում՝ սեզոնայնության բացահայտման համար:

Խնդիրները: Հոդվածում դրված նպատակին հասնելու համար մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքի դինամիկան եռամսյակային կտրվածքով 2020-2022 թթ. ընկած ժամանակահատվածում;
- Բացահայտել ՀՀ-ում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների սեզոնայնության բնույթը նշված ժամանակաընթացքում, եռամսյակային կտրվածքով, միաժամանակ վեր հանելով ներկայումս նկատված օրինաչափությունները՝ սեզոնային ալիքի համատեքստում;
- վեր հանել սպառողական գների ինդեքսի ազդեցությունը պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքի վրա՝ ըստ նրա առանձին բաղադրիչների (պարենային և ոչ պարենային ապրանքների, ծառայությունների):

Մեթոդաբանություն: Տնային տնտեսությունների վիճակագրությունը սոցիալ-տնտեսական վիճակագրության ոլորտներից է, որն ուսումնասիրում է բնակչության կենսամակարդակը: Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տվյալների հավաքագրման առավել կարևոր գործունեության տեսակներից է: Նման հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների կենսամակարդակի վերաբերյալ հավաքագրվում է բավականին հարուստ տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ՎԿ-ին տարեկան կտրվածքով հանրությանը արդիական տեղեկատվություն տրամադրել երկրում աղքատության մակարդակի փոփոխության վերաբերյալ: Հայտնի է, որ կենսական նվազագույնի որոշման համար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը:

Նվազագույն սպառողական զամբյուղը ներառում է երկու բաղադրիչ՝ նվազագույն պարենային զամբյուղը և հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառումը:

Գիտական նորույթը: Հոդվածի գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- կիրառելով սոցիալ-տնտեսական երևույթների սեզոնայնության ուսումնասիրության վիճակագրական մեթոդը, հաշվարկելով վերջին երեք տարիներին ՀՀ պարենային զամբյուղի, և նվազագույն սպառողական զամբյուղի սեզոնայնության ինդեքսները եռամսյակային կտրվածքով **բացահայտվել է**, որ 2022թ.-ի բոլոր եռամսյակներին գրանցվել է բարձր ցուցիչներ, ինչը սկսել է նկատվել դեռևս 2021թ.-ի 4–րդ եռամսյակից, արդյունքում խախտվել է նախկին տարիներին հանրապետությունում մշտապես նկատված օրինաչափությունը (3-րդ և 4–րդ եռամսյակներին միշտ գրանցվում էր սեզոնայնության ինդեքսների առավել ցածր ցուցանիշ՝ համեմատած տարվա մնացած եռամսյակների հետ՝կապված մրգերի, բանջարեղենի բերքահավաքի ժամանակահատվածում դրանց գների համեմատաբար ավելի ցածր լինելու հետ),
- **բացահայտվել է** պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքների վրա սպառողական գների ունեցած ազդեցությունը սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կտրվածքով:

Բանալի բառեր. կենսանվազագույն, պարենային զամբյուղ, նվազագույն սպառողական զամբյուղ, աղքատության գիծ, սեզոնայնության ինդեքս, սեզոնային ալիք:

СТАТИСТИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ СЕЗОННОСТИ ПОТРЕБИТЕЛЬСКИХ КОРЗИН В РА ЗА ПЕРИОД 2020-2022 ГГ. В КВАРТАЛЬНОМ РАЗРЕЗЕ

Гоар Вазгеновна Варданян

Аннотация. При статистическом изучении уровня бедности прежде всего определяется предел доходов, обеспечивающий потребление на минимально допустимом уровне, то есть определяется величина прожиточного минимума, при котором сравниваются фактические доходы отдельных слоев населения. Прожиточный минимум – это стоимостная оценка потребительской корзины, а также обязательных платежей и сборов. Для определения прожиточного минимума используется метод потребительской корзины.

Цель статьи. Цель статьи - изучить динамику продовольственной и минимальной потребительской корзины в РА поквартально в 2020-2022 годах для выявления их сезонности.

Задачи. Для достижения поставленной в статье цели нами были решены следующие задачи:

- изучить и проанализировать динамику стоимости продуктов питания и минимальных потребительских корзин в РА в период 2020-2022 годов в квартальном разрезе;

- выявить характер сезонности продовольственных и минимальных потребительских корзин в РА за указанный период, ежеквартально, выделяя при этом наблюдаемые в настоящее время закономерности в разрезе сезонной волны;
- выявить влияние индекса потребительских цен на стоимость продовольственной и минимальной потребительской корзины по отдельным ее составляющим (продовольственные и непродовольственные товары, услуги).

Методология. Известно, что для определения прожиточного минимума используется метод потребительской корзины. Минимальная потребительская корзина включает в себя две составляющие: минимальную продовольственную корзину и потребление основных непродовольственных товаров и услуг.

Научная новизна. Научная новизна статьи заключается в следующем: применяя статистический метод изучения сезонности социально-экономических явлений, рассчитывая индексы сезонности продовольственной корзины РА и минимальной потребительской корзины за последние три года поквартально, было выявлено, что высокие показатели фиксировались во всех кварталах 2022 года, которые начали отмечаться еще в 2021 году с 4 квартала, в результате чего закономерность, наблюдавшаяся в республике в предыдущих годах, была нарушена (в 3 и 4 кварталах всегда регистрировался самый низкий показатель индексов сезонности, по сравнению с остальной частью года, из-за относительно более низких цен на фрукты и овощи в период сбора урожая).

Ключевые слова: прожиточный минимум, продовольственная корзина, минимальная потребительская корзина, черта бедности, индекс сезонности, сезонная волна.

STATISTICAL STUDY OF SEASONALITY OF CONSUMER BASKETS IN RA FOR THE PERIOD 2020-2022 WITH QUARTERLY DATA

Gohar Vazgen Vardanyan

Abstract. In a statistical study of the poverty level, first of all, such limit of income is determined that ensures consumption at the minimum allowable level, that is, the subsistence minimum is determined, which is the comparable basis for the actual incomes of individual segments of the population. The living wage is a cost estimate of the consumer basket, as well as mandatory payments and fees. The consumer basket method is used to determine the subsistence minimum.

Purpose of the article. The purpose of this article is to study the dynamics of the food and minimum consumer basket in the Republic of Armenia on a quarterly basis in 2020-2022 to identify their seasonality.

Tasks. To achieve the goal set in the article, following tasks were set: to study and analyze the dynamics of the cost of food and the minimum consumer basket in the Republic of Armenia in the period 2020-2022. quarterly; identify the nature of the seasonality of food and minimum consumer baskets in the Republic of Armenia for the

specified period, on a quarterly basis, while highlighting the currently observed patterns in the context of the seasonal wave; to identify the impact of the consumer price index on the cost of the food and minimum consumer basket for its individual components (food and non-food products, services).

Methodology. It is known that the consumer basket method is used to determine the subsistence minimum. The minimum consumer basket includes two components: the minimum food basket and the consumption of basic non-food goods and services.

Scientific novelty. The scientific novelty of the article is as follows: by using the statistical method to study the seasonality of socio-economic phenomena, calculating the indexes of the seasonality of the food basket of the Republic of Armenia and the minimum consumer basket for the last three years on a quarterly basis, it was revealed that high rates were recorded in all quarters of 2022, which began to be observed even in the 4th quarter of 2021, as a result of which the pattern observed in the republic in previous years was violated (in the 3rd and 4th quarters, the lowest indicator of seasonality indexes was always recorded, compared to the rest of the year, due to relatively lower prices on fruits and vegetables during the harvest period).

Keywords: living wage, food basket, minimum consumer basket, poverty line, seasonality index, seasonal wave.